ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 5201
02 JUN 2020
Կից ☐ Նշում 15/15

«02» հունիս 2020թ. No 1723 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103052720 առ 15.05.2020թ. գրությունը և դեղի պարզեցված ընթացակարգով կատարված փորձագիտական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Պարզեցված ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 3 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրելյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղի գրանցման հավաստագրի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

Հանձն. 02.06.20 Հ 15⁰⁰

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղի գրանցման հավաստագրի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5.Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղի գրանցման հավաստագրի տրամադրումը հայտատուին:

6.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

02.06.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2020 թվականի հունիսի 02 - ի
N 1723 – Ա հրամանի

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ
ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

Հ/Հ	Առևտրային անվանում	Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ	Դեղաձև	Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում)	Արտադրող ֆիրման	Երկիր	Գրանցման հավաստագրի իրավատեր	Երկիր	Բացթողման կարգ	Եզրակացության համար և ամսաթիվ
1	Քափուր-Սալիցիլիկում քսուք	քափուր, սալիցիլաթթու	քսուք	7,5գ/50գ+3,75գ /50գ; 50գ ալյումինե պարկուճ	Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400	Բուլղարիա	Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400	Բուլղարիա	Դ	19223 15.05.2020
2	Ռեֆրիջերանս նրբաքսուք	ալյումինի ացետատ	նրբաքսուք	1,5գ/50գ; 50գ ալյումինե պարկուճ	Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400	Բուլղարիա	Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400	Բուլղարիա	Դ	19224 15.05.2020
3	Անտիֆլեգմին քսուք	քափուր, ֆենոլ	քսուք	2,5գ/50գ+2,5գ/ 50գ; 50գ ալյումինե պարկուճ	Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400	Բուլղարիա	Վետպրոմ ԱԴ, Օտեց Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400	Բուլղարիա	Դ	19225 15.05.2020